

ԸՆԴԴԻՄԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Մանուշ Էմիլի Բալայանի «Ռուպեր Հատտեճյանի ստեղծագործության գեղագիտությունը» թեկնածուական ատենախոսությունը

Կոստանդնուպոլիսը արևմտահայ գրական-մշակութային, հոգեմտավոր կյանքի եռուն կենտրոն է եղել վաղ միջնադարից՝ բյուզանդական ժամանակներից ի վեր, առավել ևս՝ XVIII – XIX դարերում և XX դարասկզբի մինչեղեռնյան շրջանում, իսկ հետղեռնյան շրջանում սփյուռքահայ արդի գրականության զարգացման բնօրրաններից ու կարևորագույն կենտրոններից մեկն է ցայսօր: Կ. Պոլսում հիմա էլ կան գործող 36 հայ եկեղեցի ու կանգուն մատուռ, գործում են գրեթե նույնքան էլ հայ դպրոց ու պարբերականներ, մշակութային զանազան հաստատություններ: Այնպես որ, Կ. Պոլիսը հարավամերիկյան, եվրոպական մերձավորարևելյան մյուս գաղթօջախների նման չէ, ուր հայերը բնակվել են Յեղասպանության հետևանքով իրենց բնօրրանը լքելով:

Հայության համար Կ. Պոլիսը ուրիշ՝ հայրենիքի՝ արժեք ունի. այնտեղ իրականում թուրքերն են եկվոր, և դա հաստատում է Ռ. Հատտեճյանն ինքը. «Մենք՝ հայերս, հոս կապրինք թուրքերե առաջ», այստեղ մեր ազգային հարստությունը ոչ միայն գետնի վրա է, այլև, ցավոք, ավելի շատ է գետնի տակ, և մենք «չենք կարող հենց այնպես Պոլիսը լքել ու հեռանալ»:

Թուրքական իշխանությունների, մեղմ ասած, ոչ այնքան բարեհաճ վերաբերմունքի պայմաններում այսօր էլ այնտեղ գոյատևում է բազմաթիվ հայ համայնքն իր գրական – մշակութային կյանքով՝ անձնվեր մտավորականների ու հատկապես գրող արվեստագետների և հանրային գործիչների հայապահպան ջանքերի շնորհիվ:

Շատ չխորանանք հեռավոր դարեր. մեծ դասականներ Պեշկեթաշյանի ու Դուրյանի, Պարոնյանի և Օտյանի, Ինտրայի ու Տեմիրճիպաշյանի, Զոհրապի ու Արփիարյանի, Երուխանի ու Զարդարյանի, Մեծարենցի ու Զարիֆյանի, Սիամանթոյի ու Վարուժանի ավանդները նորագույն ժամանակներում շարունակեցին ու զարագացրին երկու մեծ Հակոբները՝ Մնձուրին ու Օշականը, աապա և՛ Զահրատն

ու Ռուպեր Հատտեճյանը, Իգնա Սարղասլանը, Վարդ Շիկահերը, Զարեհ Խրախունին և ուրիշներ: Նկատենք, որ այս երևելիների շարքում է նաև պոլսահայ արդի գրականության շուրջ հարյուրամյա մեծավաստակ նահապետը՝ արձակագիրն ու թատերագիրը, գրական վերլուծաբանն ու հրապարակագիրը, 1967-ից՝ Պոլսի «Մարմարա» պարբերականի երկարամյա բազմափորձ գլխավոր խմբագրապետ Ռուպեր Հատտեճյանը, ում գեղարվեստական ստեղծագործությունների քննությանն է նվիրված սույն ատենախոսությունը՝ Ժ. 01. 02. դասանիշով «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Արևմտահայ դասականներն, անշուշտ, միշտ եղել են մեր գրականագիտության երևելիների՝ նույն Հ. Օջականի տասնհատորյա «Համապատկերի», ակադ. ակադ. Ա. Տերտերյանի, Հր. Թամրազյանի, Էդ. Զրբաշյանի, Ս. Սարինյանի, ինչպես և՛ Պ. Սևակի, պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանի, Գեղամ Սևանի, Ալ. Շարուրյանի, Ա. Դանիելյանի, Ս. Մուրադյանի, Ալ. Մակարյանի, Քն. Աբրահամյանի և այլ գրականագետների տեսադաշտում: Պոլսի սփյուռքահայ արդի գրողները նույնպես արժանացել ու արժանանում են պատշաճ վերաբերմունքի ու գնահատության: Ահավասիկ մեզ է ներկայացված արդի սփյուռքահայ գրականության հենասյուներից և կարկառուն դեմքերից մեկին՝ Ռուպեր Հատտեճյանին նվիրված գրականագիտական ծանրակշիռ ուսումնասիրություն: Գրական այս ազնիվ մշակն իր պատկառելի վաստակով, ազգանվեր հանրային գործունեությամբ առաջներում էլ դուրս չի եղել գրաքննադատության ու վերլուծաբանների տեսադաշտից, սակայն ապասվում էր, որ Ա. Դանիելյանի 1996 թ. ուղղորդող հայտնի մենագրությունից շուրջ 30 տարի հետո ստեղծվելու էր Հատտեճյանին նվիրված գրականագիտական համակարգված նոր ուսումնասիրություն, որի էջերում այս գրողի պատկառելի ամբողջական ժառանգությունը համակողմանիորեն արժևորվի ոչ թե սոսկ մակդրային հիացական բնութագրումներով, այլ մասնագիտական ու մանավանդ գեղարվեստական ու գեղագիտական

բացահայտումներով: Ուրեմն՝ Մանուշ Բալայանի՝ Արցախի պետական համալսարանում հաստատված, ցավոք, վերջին և այժմ քննարկվող ատենախոսության «Ռոպեր Հատտեճյանի ստեղծագործությունների գեղագիտությունը» վերնագիրը ո՛չ միայն պատահական չէ, այլև նպատակային է ըստ էության և ուսումնասիրության ուղղվածությունը կանխորոշող: Սա էլ նշանակում է բազմաժանր, լայն հետաքրքրությունների և ընդգրկումների տեր այս գրողի ամբողջական ստեղծագործությունների տեսակավորված այնպիսի համակարգում, նրա պատմվածքների, թատերգությունների, վեպերի և «Հուշատետր» շարքի բազմահատորյակում ներառված խոհափիլիսոփայական երկերի քննություն այնպիսի մեթոդաբանությամբ ու դիտողականությամբ, որ հստակ ու տեսանելիորեն երևա նրանցում պատկերված XX դարի երկրորդ կեսի և XXI դարասկզբի պոլսահայ իրականությունը այն փոփոխություններով, որ ձևավորվել ու կայացել էին Պարոնյանից, Օտյանից ու մյուս դասականներից հետո՝ նորագույն ժամանակներում: Իսկ այսպիսի արդյունքը հետևանք է համառ աշխատասիրության ու մեծ ջանքերի ներդրման, որ ենթադրում է մեծ ծավալի գրականության ու գրականագիտական աշխատանքների, մամուլի ուսումնասիրություն, որ հայցորդը կատարել է բարեխղճորեն՝ հարցի պատմության ամբողջական ներկայացմամբ և նախորդների վաստակը պատշաճորեն արժևորելով:

Ռոպեր Հատտեճյանի ստեղծագործության այս համակարգված ուսումնասիրությունն աչքի է ընկնում գիտական կարևոր արժանիքներով, որ հավաստվում են ատենախոսության նպատակահարմար կառուցվածքով, արդիական հարցադրումներով ու դրանց պատշաճ մակարդակի քննությամբ, սփյուռքահայ գրականության զարգացման օրինաչափությունների բացահայտումներով և էկզիստենցիալ փիլիսոփայությամբ կենսաճանաչողության հակումներով Հատտեճյանի ստեղծագործության գեղարվեստական արժեքի թարմ ու ինքնատիպ գնահատումով: Այդ կարևոր արժանիքներից է հենց այն, որ Ռ. Հատտեճյանի ստեղծագործությունը դիտարկվում է ոչ թե մեկուսի՝ առանձնացված, այլ նախորդների ու ժամանակակիցների լայն

շրջագծում, գրողի գեղարվեստական մտածողության և փիլիսոփայական հոգեվերլուծության համադրություններում. հատկանիշներ, որոնք առավելապես բնորոշ են Հատտենճյան փիլիսոփա և գեղագետ գրողին:

«Պարոնյան մեզի բերավ բարքերու բարիքը», – գրել է Հակոբ Օշականը Հ. Պարոնյանի մասին և բացահայտել հանճարամիտ երգիծաբանի երկերի գեղարվեստական արժեքը: Հայցորդ Մանուշ Բալայանն էլ իր ատենախոսությամբ յուրովի ջանացել է ցույց տալ, թե ի՞նչ բերեց Ռուպեր Հատտենճյանն իր գործունեությամբ ու ստեղծագործություններով: Սրանով էլ թելադրված է ատենախոսության նպատակահարմար կառուցվածքը, որով և ապահովված է գրողի «փոքր արծակի» պատմվածքների, «Առաստաղ» և «Առաստաղին մյուս կողմը» վեպերի, թատրերգությունների էջերում արծարծված կենսափիլիսոփայական, բարոյահոգեբանական, ազգապահպանական հարցադրումների, կերպարակերտման արվեստի ու գեղագիտական սկզբունքների պատշաճ մակարդակով քննությունը:

Ներածության մի քանի էջերում ատենախոսուհին, ըստ կանոնակարգի, հաջողությամբ հիմնավորել է աշխատանքի թեման, նրա արդիականությունն ու գիտական նորույթը, պարզաբանել իր հետազոտության նպատակներն ու խնդիրները, ապա ատենախոսության չորս գլուխներում քննել է Ռ. Հատտենճյանի տարածանք ստեղծագործությունները նրա գրական մտածողության յուրահատկությունների, գեղարվեստական պատկերներում վերակերտված իրականության ու բուն իրականության համապատասխանությունների, կերպարակերտման արվեստի և գեղագիտական խնդիրների արծարծումների տեսանկյունից:

Խորհրդահայ իրականության մեջ սփյուռքահայ ոչ բոլոր գրողներն են արժանացել գնահատման ու պատշաճ վերաբերմունքի, մանավանդ նրանք, ովքեր ունեցել են ո՛չ խորհրդային կողմնորոշում և անդամակցել են հայ ազգային քաղաքական կուսակցությունների: Վերջին հանգամանքը լուրջ պատճառ էր գեղարվեստական մեծ արժեքներ ստեղծած Համաստեղի, Ահարոնյանի, Օշականի, Նարդունու և ուրիշների

ստեղծագործությունների, անգամ նրանց անունների՝ գլավլիտային հատուկ ցուցակով արգելման: Բարեբախտաբար այդ խստությունները չեն վերաբերել Ռ. Հատտեճյանին ու նրա ստեղծագործությանը: Սփյուռքահայ թույլատրելի մյուս գրողների հետ նրան անդրադարձել են գրականագետներ Գ. Սևանը, Վ. Գաբրիելյանը և ուրիշներ, իսկ պրոֆ Սուրեն Դանիելյանը 1996 թ. մի պատկառելի մենագրություն է հրատարակել Հատտեճյանի մասին: Այս գրականագետների աշխատություններն էլ կողմնորոշել - ուղղորդել են հայցորդին իր ատենախոսությունը շարադրելիս. ընդ որում հայցորդը պատշաճորեն արժևորել է նաև նրանց ու սփյուռքահայ գրական մտավորականների՝ Զահրատի, Մինաս Թեղեղյանի, Զարեհ Խրախունու, Թորոս Թորանյանի դիտումները, իսկ իր գիտական ղեկավարի՝ պրոֆ. Ս. Դանիելյանինը՝ առավել ևս:

Միանգամայն ճիշտ է հայցորդի մոտեցումը՝ Հատտեճյանի ստեղծագործությունը ժանրային դասակարգմամբ քննելով: Սա հնարավորություն է ստեղծում ճիշտ պատկերացում կազմելու գրողի ձևավորման ու հասունացման և նրա գեղարվեստական մտածողության զարգացման ընթացքի մասին՝ ինչի՛ց է սկսել և դեպի ո՛ր է շարժվել կենսաճանաչողության խորացման ու գրական վարպետության հասունացման շնորհիվ:

Արտաքուստ մի ընդհանրություն է նկատվում երկու պոլսեցի գրողների՝ Լևոն Նահաշպետյան - Շանթի և Ռուպեր Հատտեճյանի մեկնարկային քայլերի միջև. երկուսն էլ կատարյալ գրող դառնալու համար գրականության պատմության, գեղագիտության ու փիլիսոփայության հետ միասին անհրաժեշտ են համարել, այսպես ասած, **մարդագիտությունը**՝ մարդուն կենսաբանորեն ու հոգեբանորեն համակողմանի ճանաչելը: Ինքնակենսագրության մեջ Շանթը նշել է. «Գրվեցա ուսանող մանկավարժության և հոգեբանության»: Ավելին՝ գերմանական համալսարաններում նա նաև մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ կազմախոսություն է յուրացրել այդ նպատակով: Հատտեճյան գրողն էլ համալսարանական ուսում-

նառության ընթացքում նախընտրել է գեղագիտության, փիլիսոփայության ու հոգե-վերլուծության յուրացումները, որոնք լրացուցիչ հնարավորություն կտային նրան մարդու համակողմանի կերպարակերտման արվեստում: Եվ սրանց համադրվել է մի բարեբախտություն՝ Հակոբ Մնձուրու և Հակոբ Մարթայան - Դիլաչարի հետ անձ-նական մտերմությունը, որը վճռական եղավ նրա աշխարհայացքի և գրական մտա-ծողության ձևավորման ու ստեղծագործական կյանքի ողջ ճանապարհին:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Փոքր արձակի կերպարակերտման արվես-տը» խորագրով, կարծես բնութագրությունն է պոլսահայ գրական միջավայրի ու մթնոլորտի, պոլսական նոր բարքերի, ուսումնասիրվող հեղինակի գրական մուտքի, սկզբնական շրջանում նրա պատմվածքներում կերպավորված հերոսների մարդ-կային բնավորության, նրանց՝ մասնավոր անձից գեղարվեստական կերպար դարձ-նելու գեղագիտության: Այստեղ էլ դրսևորվել է հայցորդի՝ գրողին իր ժամանակի ու միջավայրի մեջ ներկայացնելու միտումը, որն անկասկած դրական արժանիք է:

1967-ից «Մարմարա» թերթի գլխավոր խմբագրապետի պաշտոնը ստանձնելով՝ Հատտեճյանը կարողացավ այդ պարբերականի շուրջը համախմբել Պոլսի գրական կենդանի ուժերին, նոր շունչ հաղորդել գրական – մշակութային կյանքին ու վերա-կանգնել նրա երբեմնի հեղինակությունը: Ընթերցողը նրա էջերում օրվա լուրերից, երկրի տնտեսական-քաղաքական, միջազգային կյանքի նորություններից, գրական վերլուծություններից բացի՝ ըմբռնում էր գեղարվեստական նյութեր, որոնք իր՝ Հատտեճյանի ու նրա սերնդակիցների ստեղծագործություններն էին:

Այս գլխում արժևորված են «Բառասխալ» ժողովածուի 19 պատմվածքները, որոնց գեղարվեստական արժեքի բացահայտմամբ էլ բնութագրվում են գրողի ինքնատի-պությունն ու կերպավորման արվեստի յուրահատկությունները հենց գեղագի-տության տեսանկյունից: Պատմվածքներում կերպավորված հերոսները՝ որպես նորագույն ժամանակներում պոլսական միջավայրի՝ իրական նախատիպերի հիմքով ստեղծված գրական կերպարներ, բառասխալի զոհեր են, կյանքից մեկուսացած, միայնության տառապանքին ընտելացած, ներանձնացած մարդկանց կերպարներ,

որոնց ուսումնասիրողն իրավացիորեն համարում է հեղինակի գեղարվեստական գյուտը, որն ինքնին բարձր արվեստի ցուցանիշ է: Այստեղ առավել կարևորվում է կերպարների էության մեջ ներսուզվելու, նրանց մարդկային, հոգեբանական ապրումների էությունը դիտարկելու հայցորդի ունակությունը առավելապես այն դեպքերում, երբ հերոսը ինքնակերպավորված հեղինակն է, որ չի կամենում ազատագրվել սեփական գլխացավից ու առտնին հոգսերից: Անգամ այն դեպքերում, երբ ներկայացնում է ոչ առաջին դեմքով նոր հերոսի խոսք, դա նույնպես իրենն է՝ հեղինակինը: Թե՛ իրեն, թե՛ այդ նոր հերոսին կերպավորելիս հեղինակը դրսևորվում է թե՛ ինքնահեգնանք, թե՛ ինքնակարեկցանք, որովհետև սեփական մեկուսացումից, գլխացավից ու տառապանքից ազատվելը նրան կմատներ բացարձակ անզորության և կյանքի ու մահվան սահմանագծում ոգորող մարդուն կմղեր համապատասխան փիլիսոփայական խորհրդածությունների:

Այս նախադրյալներից էր պիտի ծնվեր Հատտեճյանի պատմվածքների՝ բանաձևային բնորոշումը որպես եզրահանգում. «Հատտեճյանի պատմվածքները առանձնահատուկ են էկզիստենցիալիստական հարցադրումներով, արսուրդի ու զավեշտի, սովորականի և արտասովորի, երևակայականի ու առօրեականի նուրբ ներհյուսումով»: Այս հիմքով էլ նա Հատտեճյանին համարում է սփյուռքահայ գրականության մեջ պատկերավորման այս համադրական դպրոցի «առաջնորդներից մեկը»¹:

Ընդհանուր առմամբ՝ ատենախոսության բոլոր չորս գլուխներում էլ դրսևորել են հայցորդի՝ գիտահետազոտական նպատակասլաց աշխատանք կատարելու մասնագիտական հմտությունները, պատկերի և նրանում արտացոլված իրականության գեղարվեստականացման նրբությունների բացահայտման իմաստով:

Ատենախոսի մասնագիտական բարձր կարողությունները դրսևորվել են նաև երկրորդ գլխում, ուր քննվում է Հատտեճյանի վիպական ժառանգությունը: Այս գլուխը ևս ունի շարադրանքին համապատասխան խորագիր՝ «Հոգեբանական ապրումի գեղագիտությունը. «Առաստաղ»»:

¹ Տե՛ս Ատենախոսություն, էջ 49:

Հայտնի են «փոքր արձակի»՝ պատմվածքի, նորավեպի, և վիպական կառույցի՝ վեպի և վիպաշարի ժանրային յուրահատկություններն ու տարբերությունները. դրանք և՛ կառուցվածքային են, և՛ դիպաշարային, և՛ կերպարային և թե՛ լեզվաոճական:

Վեպն, անշուշտ, ժանրի տեսակետից ավելի բարդ կառույց է, ընդգրկում է ավելի լայն կենսատարածք, ունենում է դիպաշարային ճյուղեր ու դրանց զուգահեռ ու հավող զարգացումներ, վիպական հանգույցի շուրջ զարգացող գործողությունների և դրանք իրականացնող հերոսների կերպարային բարդ հարաբերություններ:

Թեև «Մարմարայում», «Սան»-ում և այլուր տպված նյութերով, տպավորիչ պատմվածքներով ու թատրերգություններով Հատտեճյանն արդեն կայացած գրող էր, բայց նրան՝ որպես գրողի, նաև Հայաստանում մեծ ճանաչում բերեց 1983 թ. տպված «Առաստաղ» վեպը: Այնքան տպավորիչ էր այս վեպը, որ հեղինակի գրչեղբայր Իգնա Սարճալանը «վիպագրության կատար» անվանեց այն: Մենք կարևորում ենք այդ վեպի ոչ միայն գրականագիտական հմուտ վերլուծությունը, այլև այն դիտարկումները, որ հայցորդը կատարել է վեպի ստեղծագործական պատմության և մանավանդ պատմվածքներում ու դրամաներում արդեն կերպավորած հերոսների, մանավանդ խորհրդանշական Ծերյանի ու մյուս ծերունիների կերպարների հետ ունեցած ընդհանրությունների բացահայտման առումով: Մեր համոզմամբ՝ հայցորդի գրականագիտական - վերլուծական մտքի լավագույն հատկանիշները դրսևորվել են այս վեպի՝ գրված «Առաստաղ» և «Առաստաղին մյուս կողմը» ու չգրված կամ անտիպ «Առաստաղը փլավ» մասերի մեկնաբանության մեջ: Սկսած «Առաստաղ» վերնագրի մեկնությունից մինչև նրա երեք մասերի ներքին միասնության դիտումները, Ծերունու կերպարի ու վեպի կերպարային համակարգի և դիպաշարային գծերի խոր վերլուծությունները, նրանց խորհրդանշական իմաստների բացահայտումները վկայում են հայցորդի գրականագիտական հասուն մտածողության առկայությունը: Թերևս մեր գրականության պատմության խոր իմացությամբ է կատարվել Շահնուրի «Նահանջը առանց երգի» և Հատտեճյանի

«Առաստաղ» վեպերի զուգադրական քննությունը, որով բացահայտվում են փարիզահայության և ստամբուլահայության առջև ծառացած ծովման վտանգի ահավորության գեղարվեստական համանման պատկերը:

Հիվանդասենյակի առաստաղը, որին գրեթե անթարթ հայացքով նայում է անդամալույծ Ծերունին, նրա ներաշխարհի, ազգային ու համամարդկային մտորումների համապատկերը, որ համալրվում է դստեր՝ Սաթենիկի, և նրա ամուսնու՝ Հակոբի արարքների շուրջ մտորումներով, դարձյալ հանգեցնում են էկզիստենցիալ վիճակի, որ այնքան հմտորեն նկատել ու մեկնաբանել է հայցորդը:

Ատենախոսության մյուս գլուխները, որոնցում քննված են Հատտեճյանի դրամատիկական երկերը՝ կերպարների հոգեբանական երկվության մեկնաբանման և «Հուշատետր» խոհափիլիսոփայական բազմաբաղադրիչ շարքի (որոնցից մեկում պատկառելի գրողը նաև մեզ ու մեր «Երվանդ Օտյան» մենագրությանն է անդրադարձել Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում Զահրատի, Վարդ Շիկահերի, Զարեհ Խրախունու, Իգնա Սարըասլանի հետ հանդիպման առթիվ) արժևորման մեջ նույն հետևողականությունը, խոր իմացականությունն ու գիտական բարեխղճությունն է դրսևորել:

Այսքանից հետո դիտողություններ էլ ունենք, որ էական չեն, այլ պարզ ցանկություններ, որոնց վրա հրավիրում ենք հայցորդի ուշադրությունը նախքան ատենախոսության՝ մենագրության տեսքով հրատարակելը:

Ընդհանուր առմամբ գրագետ շարադրանքում երբեմն հանդիպում են թեև հասկանալի, բայց ոչ հստակ, անհաջող ձևակերպումներ, ինչպես էջ 19-ում՝ «Ռ. Հատտեճյանի «Բառասխալ» ժողովածուի պատմվածքների քննությունը կատարվել է մեկ ընդհանուր հիմնադրույթի շուրջ. դա բառասխալն է, անհատի չհասկացված լինելը»:

Համաձայն ենք, որ հայցորդի համար ուղենիշ պիտի լինեին իր գիտական ղեկավարի՝ վաստակաշատ գրագանագետ պրոֆ. Ս. Դանիելյանի բնորոշումները,

մանավանդ որ մեր իրականության մեջ նա Ռ. Հատտեճյանի լավագույն ուսումնասիրողն ու մեկնաբանն է, սակայն, թվում է, չարաշահված է նրան այդչափ հաճախ դիմելու իրավունքը: Կարծում ենք՝ կարելի է երբեմն էլ ուղղակի խոսքը փոխարինել անուղղակի խոսքով. այդ դեպքում մեջբերումները, ի վնաս հեղինակի ինքնությունության, այդքան ակնառու չեն լինի:

Եզրակացություն: Մ. Բալայանը կատարել է պոլսահայ արդի և սփյուռքահայ գրականության խոշորագույն դեմքերից մեկին՝ Ռուպեր Հատտեճյանի ստեղծագործությանը նվիրված ջանադիր, արժեքավոր ու օգտակար գրականագիտական աշխատանք: Նրա գրականագիտական արժեքը մեզ թույլ է տալիս միջնորդելու ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող մասնագիտական 003 խորհրդին՝ «Ռուպեր Հատտեճյանի ստեղծագործությունների գեղագիտությունը» ատենախոսության համար Մանուշ Բալայանին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, որին նա միանգամայն արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս  ՆՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՊԱՐԳԵՎԻ

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Պրոֆ. Ս. Մուրադյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտքարտուղար՝

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Մ. Վ.

Բան. գիտ. թեկնածու

30.06.2025

